

<<ԿՈՆՍՏԱԼ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Այս փաստաթուղթը պարզաբանորեն և հետազոտողորեն արտահայտում է
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության

Պատվիրատու՝

<<ԿՈՆՍՏԱԼ>> ՍՊԸ տնօրեն՝

Կատարող՝

<<Յուրի Դավիթ>> ՍՊԸ տնօրեն

Կարեն Ասրյան

Լիլիթ Փաշինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2	Հապավումներ.....	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	7
2.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	15
3.	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	18
4.	Տեխնոլոգիական գործունեության նկարագիր.....	32
5.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	58
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	75
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	78
8.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում.....	83
9.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	86
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	89
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	93

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	<<ԿՈՆՍՏԱԼ>> ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, 2-րդ արդյունաբերական գոտի, 20 շինություններ
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ք. Աբովյան

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական

Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերություն ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային

կազմակերպություն

ԱԶ՝ Անհատ Ձեռնարկատեր

ՄՆ՝ Սանիտարական նորմ

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, 2-րդ արդյունաբերական գոտի, 20 շինություններ հասցեում նախատեսվում է գոյություն ունեցող պահեստային շենքում իրականացնել Ալյումինե պրոֆիլների և դետալների արտադրություն:

Ըստ Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի ՀՕ-110-Ն /օրենքը խմբագրված 03,05,23 ՀՕ-150-Ն/ 12-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Գոյություն ունեցող ժամանակակից պահեստային շենք շինությունների պահեստային շենքում նախատեսվում է իրականացնել ալյումինե պրոֆիլների և դետալների արտադրություն աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սույն գործունեության իրականացման համար ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և ՀՀ շրջակա միջավայրի

նախարարության ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:

ՇՄԱԳ-ում դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունները կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ և արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

1.4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Քաղաքական, օրենսդրական և վարչական շրջանակները

Սույն գլուխը ներկայացնում է <<Կոնստալ>> ՄՊԸ-ի նախագծին առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով

(ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները: “Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով: ՀՀ մակերեսային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Մույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու

պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

4. “Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հ Հ օրենք Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2023թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (03.05.23թ.ՀՕ-150-Ն) /Այսուհետ՝ Օրենք/:

Վերը նշված Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, աստմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (աստմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն. սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են էլնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա

ազդեցության մակարդակից:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հիմք ընդունելով ներկայիս Օրենքի հոդված 37-ից «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բխող ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, փորձաքննական գործընթացը նախատեսվում է իրականացնել համաձայն սույն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Այսինքն փորձաքննությունն իրականացվելու է համաձայն 2014թ.-ի ՀՕ-110 օրենքի պահանջներից ելնելով, առաջնորդվելով միայն նոր Օրենքի 12-րդ հոդվածով թվարկված նախատեսվող գործունեության տեսակները՝ ըստ բնագավառների, ինչպես նաև դրանց համար նախատեսված՝ փոփոխված, պետական տուրքի չափը:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում (ներառվել է “Բ” կատեգորիայի մեջ, այս դեպքում փոխվել է պետական տուրքի չափը)՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք,

լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են փորձաքննական կենտրոն: “Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Ըստ օրենքի հիմնադրության փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 2 փուլով 4 հանրային քննարկումների իրականացմամբ: Գործընթացի ավարտին տրվում է Պետական փորձաքննական եզրակացություն:

5. “Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

6. “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

7. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին: Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում

հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

8. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004): ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

9. Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

10, Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված

27.11.2006թ.):

11. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
12. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
13. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
14. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
15. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
16. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
17. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
18. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
19. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
20. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի

- Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,
21. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,
22. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:
23. ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի N1404-Ն որոշումը:
24. ՀՀ կառավարության 2014թ հուլիսի 31-ի 781-Ն որոշում,
25. ՀՀ կառավարության 2010թ 71-Ն որոշում,
26. ՀՀ կառավարության 2010թ 72-Ն որոշում,
27. ՀՀ կառավարության 14,08,2009թ 967-Ն որոշում,
28. ՀՀ կառավարության 08.02.2018թ 108-Ն որոշումը:
29. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը 23,11,1999թ.,
30. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը 03,04,2000թ.:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

№	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող շրջանների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ դամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական ռազմապայթուցիկության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997

5	ղտտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)				
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային բնակավայրերում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների դրսահմանային փոխադրման և դրանց եռացման նկատմամբ հսկողություն համաներու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության անակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս1998թ.)	2001	1998	2001	

9. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում, այսինքն ընկերությունը չի իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների արտադրությունը, որոնք օգտագործվում են հիմնականում շինարարության ոլորտներում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված հնարավոր ռիսկերի կամ վտանգներ չի ակնկալվում,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Հանրապետությունում՝ համապատասխան ոլորտի, այլումինե պրոֆիլների և դետալների պահանջարկի դեֆիցիտ, ինչը հետագայում կարիք կլինի լրացնել ներկրելով արտերկրներից անհամեմատ ավելի թանկարժեք հումքով,
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- Չի ներդրվի տվյալ արտադրությունը և չեն կատարվի համապատասխան հարկային վճարումներ:

Քննարկվող տարբերակ

Քննարկվող տարբերակներից է իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների ստացման արտադրություն 550.0տ տարեկան արտադրողականությամբ: Այս տարբերակի առավելություններն են.

- Արտադրվածը կարելի է օգտագործել բարձր տեխնոլոգիական հատկանիշներով արտադրանքի պատրաստման համար,

- Գործունեության արդյունքում լրացուցիչ տարածքների ներգրավում չի նախատեսվում,

- Նախատեսվում է ակտիվ մասնակցություն և ֆինանսական ներդրումներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում:

Տարբերակի թերությունները՝

- գործունեությունը կառավարվում են էլեկտրոնային ավտոմատ համակարգերով,

- տեխնոլոգիական գործընթացների սպասարկումը պահանջում է որակյալ անձնակազմ,

- հոսքագծերը, պահանջում են հաճախակի ստուգումներ և պարբերական կարգաբերումներ:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, առաջին հերթին բնապահպանական և սոցիալական գործոնները, ընտրվել է գործունեության իրականացման տարբերակը:

**3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական
հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր,
տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

- Նախատեսվող գործունեության նկարագիր

Գոյություն ունեցող պահեստների շինությունները գտնվում են Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, ք. Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 20 շինություններ հասցեում: Պատվիրատուին սեփականության իրավունքով պատկանող 2,286435 հա մակերեսով տարածքը գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական, գործառնական նշանակության գոտում:

Շինությունը կառուցված է ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, 2-րդ արդյունաբերական գոտի, 20 շինություններ հասցեում նախագծով նախատեսվում է իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների արտադրություն:

Աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03102022-077-0090 վկայականը:

Բոլոր շինություններ տանիքները երկթեք են՝ ջրահեռացումը կազմակերպված է բացառապես, սեփականության վկայականով հատկացված, հողի սահմաններում: Կազմակերպված է արտաքին ջրահեռացում:

Տարածքի ռելիեֆը այնպիսին է, որ անձրևաջրերը ինքնահոս եղանակով լցվում են հարակից սելավատարը:

Հողամասի ընդհանուր մակերես 22864.35քմ (2,286435 հա): Կոնստալ ՍՊԸ նախատեսում է վարձակալել Հայկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքից 5310քմ և իրականացնել այլումինե պրոֆիլների և դետալների արտադրություն տարեկան 550տ/տ արտադրողականությամբ:

Հայցվող տարածքի հարակից մասում է գտնվում Կոտայքի գարեջրի գործարանը, որի վարչական շենքը հայցվող տարածքից գտնվում է 67.54մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագծերի մշակման

ընթացքում ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ միջոցառումներ:


Պահեստային շինությունն ապահովված է ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգով և ապահովել համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով:

Մույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան:

Պահեստը նախատեսված է փաթեթավորված ալյումինե պրոֆիլների և արդեն նախապես կտրտված ալյումինի մանր դետալների (փաթեթավորված արկղերում) պահեստավորման համար:



ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՋՏԱԿԱԳԻՃ

 SOLARA CONSTRUCTION	
Tel.: +374 11 81 29 00 Email: info@solaraconstruct.am Web: www.solaraconstruct.am Address: Buzhistan St. 14, Armenia, Yerevan	
ԱՆՈՒՍԻ ԱՆՎՈՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆ ԸՆԹՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՐԱՆՆԵՐԻ ՎՆԱԿԱՌՆԵՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԱԽՈՒՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՄ	
ՊԵՏԱԿԱՆ 1. ԿՈՏԱՅԱՆ	
Ա. Պ. Բ.	<input type="checkbox"/>
Կ. ԳՐԱՆՎՈՐՈՒՄ ԶԱՐԿԱՐԿՈՒՄ Ա. ԿՈՏԱՅԱՆ	<input checked="" type="checkbox"/>
ԿՈՏԱՅՄԿՈՒՄ Կ. ԳՐԱՆՎՈՐՈՒՄ	<input type="checkbox"/>
ԳՋԱՐԻ ԱՆՎՈՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՋՏԱԿԱԳԻՃ	
ԱՆՈՒՍՈՒՄ ՏՊԻՆԷ Է 23.01.2023	
ԳՋԱՐԻ ԿՐԻՄ	ԹԵՐԹ
ԶՄ/3	3

Մտորն ներկայացվում են կոորդինատները՝

Գրանցման համար (սովորական)	Հողամասի 2.284635 (հա)		Չհողմասերի համար
	X	Y	
9	4457537.53	8468040.06	2.08
10	4457539.49	8468040.77	13.46
11	4457542.88	8468027.69	2.73
12	4457543.72	8468025.17	20.37
13	4457542.15	8468004.86	3.93
14	4457542.90	8468001.00	3.80
15	4457545.19	8467997.97	54.11
16	4457586.82	8467963.40	34.94
17	4457613.18	8467940.47	14.02
18	4457617.49	8467927.12	91.60
19	4457680.81	8467860.94	8.08
20	4457687.19	8467855.99	1.20
21	4457688.10	8467858.76	6.00
22	4457682.88	8467852.88	1.23
23	4457693.52	8467852.08	11.12
24	4457701.48	8467859.95	6.05
25	4457687.74	8467864.70	0.14
26	4457697.65	8467864.81	15.09
27	4457705.18	8467874.53	7.15
28	4457714.99	8467878.71	4.03
29	4457716.20	8467861.16	2.67
30	4457717.71	8467883.78	82.23
31	4457702.70	8467964.63	3.20
32	4457701.99	8467967.75	0.35
33	4457702.32	8467967.87	13.47
34	4457697.44	8467960.43	42.29
35	4457692.11	8468019.85	0.96
36	4457683.01	8468020.20	3.24
37	4457681.83	8468023.21	40.46
38	4457644.12	8468008.55	0.46
39	4457643.69	8468008.38	28.83
40	4457633.64	8468035.40	0.21
41	4457633.59	8468035.60	0.18
42	4457633.76	8468035.64	68.66
43	4457616.98	8468102.22	33.32
44	4457584.34	8468095.49	41.41
45	4457543.79	8468087.14	21.44
1	4457538.37	8468107.88	

Որոշակիրում ունեցող անձ
Որոշակիրում վկայականի համար
Ստորագրություն
Դրականական անձի անվանումը
ՀՀԿՀ
Ստորագրություն
անի
հաստատված
կազմման

Ստորագրող
Ք287
ՄԿԸ
00461075
18.08.2022թ.
08.09.2022թ.

Ստորև ներկայցվում է կադաստրի տեղեկանքը հարևան շինությունների վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱԼՔ

ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏԱՄԱՐ
ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

27/01/2023թ.

N ԱՏ-27012023-07-0657

գաղտնաբառ՝ F887HAXC6ID8

Դիմող՝

ՍԵՂԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

Ի պատասխան Ձեր 27/01/2023-1-0072 դիմումի հայտնում ենք, որ Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 20 շինություններ հասցեի 07-002-0143-0015 ծածկագրով անշարժ գույքի հարևան գույքերն են 07-002-0143-0003, 07-002-0143-0005, 07-002-0143-0005, 07-002-0143-0006, 07-002-0143-0013 ծածկագրերով հողամասերը, որոնք ըստ կադաստրային քարտեզի տվյալների արդյունաբերական օբյեկտների հողեր են և 07-002-0687-0007 ծածկագրով հողամասը, որը ընդհանուր օգտագործման ճանապարհ է:

Տեղեկանքը կազմվել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի
**Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի
ռեգիստր
ԱՐՏԱԿ ՊԱՊՅԱՆԻ** կողմից

*Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Կառույցի էլեկտրամատակարարումը իրականացվում է Գարեջուր -35/10 ԿՎ-22 բջիջից սնվող 10կվ ՕԳ-ի հենասյուից:

Հաշվառքի սարքերը տեղադրված են Գ/Ե-1784-ի 0.4Կվ վահանում:

Կառույցի էլ. լուսավորության նպատակով նախատեսված են վահաններ համապատասխան քանակի միաբևեռ ավտոմատ անջատիչներով և պաշտպանիչ անջատման սարքերով:

Լույսի աղբյուր են հանդիսանում LED լամպերով լուսատուները:

Ստորև ներկայացվում է բաժանորդի պայմանագիրը՝ Հավելված բաժնում:



Կառույցում նախատեսված են հողանցման հպակով վարդակներ և իսկ խոնավ սենյակներում պաշտպանիչ անջատման սարքեր/ՄՅՅՕ/:

Վահանակային սենյակում իրականացված է հողանցման ներքին կոնտուր , որը միանում է ՈՒԺՎ-ի գլխավոր հաղորդաթիթեղին, որը իր հերթին միանում է արտաքին հողանցման կոնտուրին:

Նախագիծը իրաանացված է համապատասխան գործող նորմերի և

կանոնների:

Ջրամատակարարման համակարգ

Տաք և սառը ջրամատակարարման հաշվային ելքերը որոշելու համար ելակետային տվյալներ են հանդիսացել մարդկանց թիվը և սանիտարական սարքերի քանակը: Հաշվարկները կատարվել են համաձայն գործող շինարարական նորմերի, ըստ որի անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) կազմում է $Q_{\max}/վրկ=1.4$ և/վրկ, $Q_{\max}/\theta_{ամ} = 5.04$ մ³/ժամ:

Համաձայն ՇՆևԿ 21-02-99-ի 6.4 շենքի հրդեհարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը կազմում է 2.5լ/վրկ (1 շիթ):

Մուտքագծի մոտ անհրաժեշտ ճնշումը հաշվում են հետևյալ բանաձևով $H=il(1+Ke)$.

որտեղ i -ն միավոր երկարության վրա ճնշման կորուստն է

l -ը հաշվային հատվածի երկարությունն է

Ke -ն ճնշման կորուստը հաշվի առնող գործակից է, ընդունում ենք $Ke=0.3$:

Պահանջվող ճնշումը հաշվելու համար ամենահեռավոր կետում գտնվող սանիտարական սարքի մոտ ազատ ճնշումը ընդունվել է 3մ, ըստ ՇՆևԿ 2.04.01-85*-ի 2 հավելվածի:

Հաշվարկի արդյունքում մուտքագծի մոտ անհրաժեշտ ճնշումը կազմում է խմելու տնտեսական ջրապահանջի համար 18 մետր, իսկ հակահրդեհային կարիքների համար՝ 25 մետր:

Մուտքագիծը իրականացվել է DN50 պողպատե խողովակով: 0.0 նիշում տեղադրված են բաքեր պահուստային ջրապաշարով հրդեհը մարելու համար:

Ջրամատակարարման համակարգը փակուղային է և բաղկացած է մագիստրալ խողովակներից, կանգնակներից և ճյուղավորումներից: Սանիտարական սարքերի սնուցող բոլոր կանգնակների և դեպի սանիտարական սարքեր ճյուղավորումների վրա (խոհանոցներում, սանհանգույցներում) շահագործման նկատառումներից ելնելով նախատեսված են փականներ: Այն նախատեսվում է իրականացնել համաձայն տրված տեխ պայմանի՝ հավելվածում կցվում է:

Տաք ջուրը կիրականացվի ջեռուցման համակարգի հետ միասին:

Նախատեսված է հակահրդեհային հիդրանտի հոր արտաքին հրդեհը մարելու համար:


Ջրահեռացման համակարգ

Ընդհանուր կոյուղաջրերի ելքը կազմում է 3.0 լ/վրկ: Նախագծվող շենքի կոյուղու ներքին ցանցը ինքնահոս է: Ինքնահոս համակարգը իր մեջ ներառում է նկուղային հարկից վերև գտնվող սանիտարական սարքերը, որոնց կոյուղաջրերը ուղղվում են դեպի կոյուղու դիտահոր ԴՀK1- 1 (D=1000մմ) չափսերի:

Կոյուղու կանգնակների ստուգիչների դիմաց հորաններում նախատեսել դռնակներ:

Փագամատակարարման համակարգ

Հավելվածներ բաժնում ներկայացվում է բաժանորդի պայմանագիրը:



Պատմության և մշակույթի հուշանձաններ

ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկ

Համաձայն ՀՀ կառավարության 967-Ն որոշման

Երկրաբանական հուշարձաններ

31.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
32.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
33.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
34.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
35.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավձի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
36.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
37.	«Բազալտե երգեհոն» սյունածև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
38.	«Անանուն» քարայր սյունածև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
39.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
40.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
41.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
42.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ջովաշեն գյուղից 2.0 կմ արմ
43.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 1.5 կմ հս-արլ
44.	«Գյումուշ» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 0.5 կմ հս-արլ
45.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Գյումուշ ՀէԿ-ի միջև
46.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում

47.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
48.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
49.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ
50.	«Չորաղբյուրի» (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Չորաղբյուր

Ջրատերկրաբանական հուշարձաններ

11.	«Հաղարտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
12.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, Եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
13.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
14.	«Չորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
15.	«Աուզի» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

7.	«Ղազ» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
8.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
9.	«Բիշար» լիճ	Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 3 կմ հս
10.	«Զեյնալ» լիճ	Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Բնապատմական հուշարձաններ

6.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
----	--------------------------------	---

Կենսաբանական հուշարձաններ

6.	«Ռելիկտային կրկես Քյորոզլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
7.	«Ալայան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրածոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, 300 մ բարձրության վրա)
8.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա


Արովյանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (այլ կիրառումներ)
 Այս հոդվածը ներկայացնում է Կոտայքի մարզի Արովյան քաղաքի պատմության և
 մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի
 կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 29 հուշարձան (10 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Ամրոց «Դարանի»	Ք.ա. 3-1 հզ	քաղաքի հվ եզրին, Էլար թաղամասում	
Միջնաբերդ	Ք.ա. 3-1 հզ		
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հզ	միջնաբերդից ամ	
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-1 հզ	ավագահանքի մոտ	ավերված
Բացօթյա կայանների համալիր	հին քարի դար	քաղաքից ամ, դեպի Հատիս լեռն ընկած բլուրների վրա	
Բացօթյա կայան Արովյան-1	հին քարի դար		
Բացօթյա կայան Արովյան-2	հին քարի դար		
Բացօթյա կայան Արովյան-3	հին քարի դար		
Բացօթյա կայան Արովյան-4	հին քարի դար		
Բացօթյա կայան Արովյան-5	հին քարի դար		
Բացօթյա կայան Արովյան-6	հին քարի դար		

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	20 դ. կես	գազի նախկին գրասենյակի շենքի ետևում, «Դարանի» հանրախանութի մոտ	թաղված են երկրորդ աշխարհամարտի ռազմագերիները
Եկեղեցի Ստեփանոս Սբ.	1851 թ.	քաղաքի հվ եզրին	
Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն հվ-ից	
Խաչքար	12-13 դդ.	հվ պատին	
Տապանաքար	1612 թ.	հվ պատի մեջ	արձանագիր
Տապանաքար	16-17 թթ.	հվ պատի մեջ	
Գերեզմանոց	15-20 դդ.	եկեղեցու շուրջը	
Խաչքար	16-17 դդ.	եկեղեցու բակում	
Կոթող	5-6 դդ.	եկեղեցու բակում	
Տապանաքար	1689 թ.		արձանագիր
Կոթող «Կապույտ խաչ»		քաղաքի կենտրոնում	
Հուշահամալիր՝ Հայաստանը Ռուսաստանին միացման 150- ամյակին	1978 թ.	քաղաքի կենտրոնում	ճարտ.՝ Ս. Բարխուդարյան
Թանգարան հայ և ռուս ժողովուրդների բարեկամության	1978 թ.		ճարտ.՝ Ս. Բարխուդարյան
Հուշարձան	1978 թ.	թանգարանի առջև	ճարտ.՝ Ս.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Խաչատուր Աբովյանին			Բարխուդարյան
Հուշաղբյուր	1974 թ.	Էլար թաղամասում	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1977 թ.	քաղաքի կենտրոնում	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		Էլար թաղամասում	
Հուշարձան Տրդատ Գ Արքային	1976 թ.	քաղաքի Սարալանջ թաղամասում	քանդ.՝ Կ. Նուրիջանյան

10. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ



1. Նախապատրաստված հումքի ուղարկում պահեստից

Նախապատրաստված հումքը պահեստից հոսքագիծ ուղարկելիս ստուգվում է որակը: Այն ներառում է արտաքին զննություն, չափի և քաշի ստուգում և այլ բնութագրեր: Հումքը պատրաստվում է արտադրական հոսքագծի պահանջներին համապատասխան: Որպեսզի այն անվնաս հնարավոր լինի տեղափոխել կիրառվում է պալետներ և այլն: Յուրաքանչյուր փաթեթ պետք է լինի պարզ պիտակավորված, որպեսզի արտադրամասը կարողանա հեշտությամբ բացահայտել դրա պարունակությունը (համաձայն պատվերի համարի, քանակի, տեսակի կամ նախապատրաստված հումքի այլ բնութագրերի նշում): Նախապատրաստված հումքը տեղափոխվում է դեպի հոսքագիծ օգտագործելով մասնագիտացված տրանսպորտային միջոցներ, ինչպիսիք են կռունկները, բեռնատարները կամ մեծ աշխատանքային մասերի տեղափոխման համար մասնագիտացված հարթակները: Այն բանից հետո, երբ նախապատրաստված հումքը կհասնի արտադրամաս անձնակազմը իրականացնում է որակի հսկողություն՝ համոզվելով, որ նախապատրաստված հումքը համապատասխանում են արտադրական պահանջներին:

2. Նախապատրաստած հումքի ստացումը արտադրամաս.

Նախապատրաստած հումքի ստացման պրոցեսը (այլումինե գլանակների չափսը՝ $\phi 178$ մմ (7 դյույմ) $\times 6000$ մմ ներառում է մանրակրկիտ համակարգում լոգիստիկայի և արտադրության թիմերի միջև անհրաժեշտ նյութերով արտադրությունն ապահովելու համար:

Նախապատրաստած հումքը առաքվում, ստուգվում և մշակվում են ժամանակին և արդյունավետ կերպով, նախապատրաստած հումքը պետք է համապատասխանի պահանջվող բնութագրերին և ստանդարտներին: Նախապատրաստած հումքը արտադրամաս առաքելուց հետո դրանք բեռնաթափվում են և պատրաստվում արտադրության գործընթացում օգտագործելու համար:

3. Նախապատրաստած հումքի նախնական տաքացում.

Նախապատրաստելով այն հետագա մշակման համար նախապատրաստած հումքը նախնական տաքացվում է, այն իրականացվում է մինչև էքստրուզիան: Նախքան գործընթաց սկսելը պատրաստվում և ստուգվում են ջեռուցման վառարանները և սարքավորումները: Այլումինե նախապատրաստած հումքը տեղադրվում է հատուկ տարաների մեջ և պատրաստում այն տաքացման: Նախապատրաստած հումքը տեղադրվում են ջեռուցման վառարանում և տաքացնում $400^{\circ}-450^{\circ}\text{C}$ ՝ կախված այլումինի համաձուլվածքի տեսակից և արտադրություն պահանջներից: Սահմանված ժամկետով վառարանում թողնելով հասցնում են ջերմաստիճանի հավասարաչափ բաշխմանը հումքի ներսում: Հանելով ջեռոցից հովացվում է մինչև սենյակային ջերմաստիճանը:

4. Էքստրուզիայի գործընթաց.

Այլումինե պրոֆիլի էքստրուզիան այլումինե երկար ձողեր ստեղծելու գործընթաց է մատրիցայի միջով - էքստրուդեր կոչվող մամլիչով: Տաքացած նախապատրաստած հումքը բեռնում են էքստրուդերի խցիկը, ճնշման տակ մտնում է էքստրուդացման գոտի, անցնում մատրիցայի միջով, որն ունի անցքեր (ֆիլեո): Ճնշման տակ տաքացվող այլումինե զանգվածը անցնում է մատրիցայի անցքերով, ինչը հանգեցնում է ցանկալի պրոֆիլի ձևավորմանը:

Ընդհանուր հզորությունը 430 կՎտ	430 կՎտ
Նախապատրաստած հումքի չափը	Φ178 մմ
Էքստրուզիայի գլխի չափը	Φ400 մմ * 400 մմ

5. Պրոֆիլների սառեցում

Էքստրուզիայից հետո այլումինե պրոֆիլը անցնում է սառեցման գործընթացով: Այս գործընթացն իրականացվում է սարքավորումների միջոցով (օդ, սառեցման խցիկներ): Սառեցման օդային խցիկում պրոֆիլը անցնում է թունելով, որում ստեղծվում է սառը օդի հոսք: Այս գործընթացը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում պրոֆիլի միատեսակ սառեցում:

6. Պրոֆիլների ձգում և կտրում

Սառելուց հետո էքստրուզացված այլումինե պրոֆիլը ենթարկվում է ձգման և կտրման ցանկալի չափի և ձևի հասնելու համար: Ձգվող մեքենայի վրա պրոֆիլը ենթարկվում է որոշակի քանակությամբ ձգման դեֆորմացիայի: Այս գործողության նպատակն է նվազեցնել պրոֆիլի ձևի շեղումները: Պրոֆիլը տեղադրվում է հատուկ կաղապարի մեջ և ենթարկվում ձգման հիդրավլիկ մամուլով: Սա թույլ է տալիս մեծացնել պրոֆիլի երկարությունը և նվազեցնել շեղումները ցանկալի չափերի: Այնուհետև պրոֆիլը կտրվում է պահանջվող երկարության հատվածներով օգտագործելով կտրող շրջանաձև սղոցներ: Կտրումից հետո պրոֆիլի ծայրերը մշակվում են սուր եզրը հեռացնելու համար կամ կլորացնում են անկյունները՝ դարձնելով այն անվտանգ հետագա մշակման համար:

Հիմնական տեխնիկական պարամետրերը

Առավելագույն պրոֆիլի երկարություն	7200մմ
Վառարանի խցիկ	L: 8000 W: 3300 H: 2250 մմ
Բեռնման խցիկի չափը	L: 7200 W: 3000 H: 1800 մմ

Վառարան	L: 9800 W: 3780 H: 3360 մմ
Ընդհանուր երկարություն	26000 մմ

7. Որակի հսկողություն և ստուգում

Այլումինե պրոֆիլը անցնում է որակի հսկողություն և ստուգում պրոֆիլի համապատասխանությունը սահմանված պահանջներին և ստանդարտներին: Համոզվելու համար թե նրանք համապատասխանում են պահանջներին տեսուչը ստուգում է պրոֆիլի մակերեսի այնպիսի թերությունները, ինչպիսիք են քերծվածքները, փորվածքները, ճաքերը և մակերեսային այլ թերությունները, պրոֆիլի երկրաչափական պարամետրերը, ինչպիսիք են լայնությունը, բարձրությունը, հաստությունը և երկարությունը:

Որակի նախնական ստուգումից հետո հնարավոր է նյութի մշակման 3 եղանակ:

8. Փոշեներկում

9. Անոդացում

10. Փաթեթավորում՝ որակի կրկնակի ստուգումից հետո

Հիմնական տեխնիկական պարամետրերը

Քաշը	620կգ
Ընդհանուր չափերը	2300*2500*1500 մմ
Դարակի չափերը	4 մ մուտք, 2 մ ելք
Մոդց	300*30*120 ատամ
Մուտքային հզորություն	380 V 50 Հց 5,5 կՎտ

- Որակի հսկողություն

- Փաթեթավորում

Փաթեթավորումը կարևոր էտապ է այլումինե պրոֆիլի փոշեներկման գործընթացում, քանի որ այն ապահովում է պատրաստի արտադրանքի պաշտպանություն բեռնման, փոխադրման և բեռնաթափման աշխատանքների ընթացքում: Փաթեթավորման գործընթացի առաջին քայլը էքստրուդացված այլումինի պրոֆիլների մակերեսը

պաշտպանելն է: Դա արվում է պատրաստի արտադրանքի վրա պաշտպանիչ շերտ անցկացնելով, օրինակ. պլաստիկ թաղանթ կամ թուղթ: Փոխադրման ընթացքում այս շերտը պաշտպանում է պրոֆիլները քերծվածքներից: Պաշտպանիչ շերտը անցկացնելուց հետո էքստրուդացված ալյումինե պրոֆիլները խմբավորվում են ըստ իրենց չափերի, ձևի և ցանկացած այլ բնութագրիչի, որը պահանջում է հաճախորդը կամ նախագծիր: Պրոֆիլները խմբավորելուց հետո դրանք կապվում են ժապավեններով, և այլ ջերմակայուն փաթեթավորման նյութերով: Պրոֆիլների փաթեթավորումը ապահովում է անվտանգ տեղափոխումը: Էքստրուդացված ալյումինե պրոֆիլները նշվում են անհրաժեշտ տեղեկություններով, ինչպիսիք են հաճախորդի անունը, արտադրանքի բնութագրերը և ցանկացած այլ կարևոր մանրամասներ: Այն երաշխավորում է ,որպիսզի պրոֆիլները հեշտությամբ ճանաչելի լինեն և որը հնարավոր կլինի հետևել ամբողջ առաքման գործընթացը:

-Պրոֆիլների ձգում և կտրում

Գործընթացները սովորաբար իրականացվում են պատրաստի արտադրանքին ցանկալի երկարության և ձև հաղորդելու համար: Այս գործընթացի առաջին քայլը ալյումինե պրոֆիլի կտրելն է ըստ ցանկալի երկարության:

Հիմնական տեխնիկական պարամետրերը

Պրոֆիլները հետագա տեղափոխելու մի քանի եղանակ կա կտրումից հետո:

10.2. Փռնեներկում

10.3. Էլեկտրոֆորեզ/Անոդացում

10.4. Որակի հսկողություն/ստուգում ներկումից/էլեկտրոֆորեզից հետո

Փռնեներկման և հերմետիկացման գործընթացն ավարտելուց հետո՝ անոդացված ալյումինե պրոֆիլը ստուգվում է ըստ պահանջվող բնութագրերի: Այն ներառում է գույնի, մակերեսի ստուգում և որակի վերահսկման այլ միջոցառումներ:

10.5. Պրոֆիլների փաթեթավորում ներկումից /էլեկտրոֆորեզից/ անոդացումից հետո

Ալյումինե պրոֆիլների ներկումից և էլեկտրոֆորեզից հետո հաջորդ քայլը պատրաստի արտադրանքը փաթեթավորումն է փոխադրման և պահպանման ժամանակ պաշտպանելու համար:

Փաթեթավորման հիմնական խնդիրն է պաշտպանել պատրաստի արտադրանքը


վնասներից փոխադրման և պահեստավորման ընթացքում: Քերծվածքներից կամ քայքայումներից կանխելու համար օգտագործվում է պաշտպանիչ թաղանթ, թուղթ և այլ միջոցներ: Կարևոր է հստակ նույնականացնել այն ապրանքները, որոնք պետք է փաթեթավորվեն, որպեսզի դրանք հետագայում հեշտությամբ նույնականացվի տեղափոխելիս: Սա ներառում է փաթեթավորել և պիտակավորել այնպիսի տեղեկություններով, ինչպիսիք են ապրանքի անվանումը, չափը, գույնը և այլ բնութագրեր: Կախված պահեստավորման և տեղափոխման պայմաններից պահանջվում է լրացուցիչ խոնավության պաշտպանություն միջոցներ՝ ժանգը և կոռոզիայի այլ տեսակներ կանխելու համար:

11. Պահեստավորում


Այլումինե պրոֆիլների (պատրաստի արտադրանքի) պահեստավորումը արտադրության գործընթացի վերջին փուլն է: Պահեստը համալրված է համապատասխան միջոցներով, որտեղ կարող են տեղավորել պատրաստի արտադրանքը: Կախված պահեստում պրոֆիլների չափերից և քանակից այն կահավորված է՝ պալետներ, դարակներ կամ դարակաշարերի շրջանակներ: Պատշաճ կերպով ապահովելու համար անձնակազմին վերապատրաստում են: Պահեստն ունի որակի վերահսկման համակարգ, որն ապահովում է պատրաստի արտադրանքի համապատասխանությունը պահանջվող համապատասխան չափանիշներին: Համակարգի ներդրում, որպեսզի որակի հետ կապված խնդիրների և թերությունների հայտնաբերման դեպքում զեկուցվի: Վերջապես, պահեստը սարքավորված լինի պատրաստի արտադրանքի առաքման և բաշխման համար: Այն ներառում է ապրանքների փոխադրման համար փոխադրողների հետ համակարգում, տրանսպորտի ,փաթեթավորման և պիտակավորման կազմակերպում:

Նախատեսվում է տեղադրել նաև մաքրման կայան, անողմացման գործընթացում առաջացող էլեկտրոլիտները մաքրելու և վերականգնելու համար: Գործում է շրջանառու համակարգ փակ ցիկլով, մաքրված ջուրը վերադարձվում է պրոցես:











Համաձուլվածքներից պրես արտադրանքի արտադրության գործընթացի սխեման



Պրոֆիլի որակի կառավարման ընդհանուր սխեմա




Գործարանի կողմից արտադրված ապրանքների ցանկը

2.1						
Չամակառուի առճիճնետի կեռահեռուղային աուտասան						
1	2	3	4	5	6	7
№	Շիճր	 Հայտնի	Մեծություն l մ.մ., սմ. <hr/> Պարզ երկար.	Չամակ արգ	Լշանակում/փոխա րիկում	
1	KI14501		$\frac{1,032}{364,7}$	KI145	Գեռակ, պատուհանի չորանակի թիզե, KI14503, KI14503-1, KI14545, KI14505	$Jx=11,3 \text{ cm}^4$ $Wx=5,02 \text{ cm}^3$ $Jy=8,77 \text{ cm}^4$ $Wy=2,58 \text{ cm}^3$
2	KI14502-4		$\frac{0,992}{361,3}$	KI145	Պատուհանի թևի սրճից	$Jx=7,6 \text{ cm}^4$ $Wx=2,32 \text{ cm}^3$ $Jy=14,61 \text{ cm}^4$ $Wy=5,21 \text{ cm}^3$
3	KI14503-1		$\frac{0,765}{308,4}$	KI145, Հասկրուս -45	Գեռակ, պատուհանի չորանակի թիզե, KI14503, KI14503-1, KI14545, KI14505	$Jx=4,48 \text{ cm}^4$ $Wx=1,47 \text{ cm}^3$ $Jy=7,45 \text{ cm}^4$ $Wy=2,93 \text{ cm}^3$
4	KI14504		$\frac{1,363}{410,71}$	KI145	Անկյունային հեռակ 90° KI14529, KI14558, KI14593	$Jx=22,578 \text{ cm}^4$ $Wx=5,2 \text{ cm}^3$ $Jy=22,578 \text{ cm}^4$ $Wy=5,2 \text{ cm}^3$
5	KI14505-1		$\frac{0,871}{370,6}$	KI145, Հասկրուս -45	Գեռակ, չորանակի թիզե, KI14505	$Jx=8,56 \text{ cm}^4$ $Wx=3,11 \text{ cm}^3$ $Jy=7,49 \text{ cm}^4$ $Wy=2,20 \text{ cm}^3$
6	KI14506		$\frac{1,156}{360,6}$	KI145	Գեռակ, չորանակի թիզե, KI14505, KI14505-1, KI14531, KI14590	$Jx=10,547 \text{ cm}^4$ $Wx=3,84 \text{ cm}^3$ $Jy=9,958 \text{ cm}^4$ $Wy=2,93 \text{ cm}^3$
7	KI14509-1		$\frac{2,755}{295,8}$	KI145, KI1160, KI1170	Անկյունային դեռակեր 90° պատուհանի չորանակի և թևի մեջ 15 մմ	$Jx=42,67 \text{ cm}^4$ $Wx=9,03 \text{ cm}^3$ $Jy=42,67 \text{ cm}^4$ $Wy=9,03 \text{ cm}^3$
8	KI14510		$\frac{1,98}{247,6}$	KI145, KI1170	Գեռակեր 1-անկյունային	$Jx=22,96 \text{ cm}^4$ $Wx=8,37 \text{ cm}^3$ $Jy=14,21 \text{ cm}^4$ $Wy=6,9 \text{ cm}^3$

Պրոֆիլների սեղմելիության դասակարգումը կախված հատման ձևերի բարդությունից

Հատման ձևի տեսակ	Պրոֆիլի տեսակ	Հատման ձևի օրինակներ
A	Սովորական գիծ	
B	Ֆատոնային գիծ	
C	Ստանդարտ պրոֆիլներ	
D	Պարզ ամուր պրոֆիլներ	
E	Կիսափակ պրոֆիլներ	
F	Սուր անցումներով կամ բարակ պատերով պրոֆիլներ, լայն պրոֆիլներ	
Հատման ձևի տեսակ	Պրոֆիլի տեսակ	Հատման ձևի օրինակներ
G	Բարդ լեզվակներով պրոֆիլներ կամ պատերի միջև քիչ հեռավորություն ունեցողներ	
H	խողովակներ	
J	Պարզ խողոչ պրոֆիլներ	
K	Բարդ խողոչ պրոֆիլներ, երկու և ավել խողոչ ունեցող պրոֆիլներ	
L	խողովակային պրոֆիլներ բարդ ծածկույթով	
M	խողովակային պրոֆիլներ բարդ ծածկույթով կամ K+L	
N	Մեծ կամ հաստ խողոչ պրոֆիլներ	

Գործարանի արտադրական, պահեստային և կենցաղային տարածքների հատակագիծը



ՔԻՄԻԱԿԱՆ-ՖԻԶԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ

Ակարագրություն.

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- 2 Կենտրոնախույս պոմպ
Մատակարարում մ³/ժ 20.0
Պատրաստված է AISI 304
- 1 Պլաստիկից պատրաստված
հոսքաչափ, աշխատանքային
միջակայքը 8.000 – 40.000 լ/ժ.
- 1 Բաքի անջատիչ:



ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՏՎԱԾ

- 3 Պլաստիկից պատրաստված ռեակտորային բաք՝ խառնիչի համար
կցորդով:
- 3 Թվային գործիք pH-ի չափման և կարգավորման համար
Լարում V 220/110
Չափման միջակայքը 0 – 14 pH
Սահմանված արժեքներ էրկու
Պաշտպանություն IP 65
- 3 PVC էլեկտրոդի գոնդ:
- 3 Համակցված pH էլեկտրոդ խիստ մեկուսացված մալուխով և
միակցիչով:

ՖԼՈԿՈՒԼՅԱՑԻԱՅԻ ՀԱՏՎԱԾ

- 1 Պլաստիկից պատրաստված ռեակտորի բաք՝ խառնիչի համար կցորդով:
- 1 Էլեկտրական խառնիչ չժանգոտվող պողպատից լիսեռով և պտուտակով:

ՕԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- 2 Օդափչիչներ
- 1 Բարբոտաժի գիծ ռեագենտների խառնման համար

ՇՐՋԱՆԱԿ ՌԵԱԿՏՈՐԻ ԲԱՔԻ ՀԱՄԱՐ

- 1 Շրջանակը մշակված է պողպատից և նախագծված է այնպես, որ բաքը հավասարվի ջրամբարի հիդրավլիկ պրոֆիլին: Տանկերի հարմարավետ կառավարման համար շրջանակը համալրված է հարթակներով, անցուղիներով և պաշտպանիչ կառուցվածքով՝ համաձայն Եվրոպական միության ստանդարտների EN ISO 14122 (մաս 1-2-3-4):

ԲԱԺԱՆԻՉ

- 1 Պլաստիկ բաք ջրամբարի միացումներով և հատվածներով, որոնք նախատեսված են որպես բաժանիչ գործելու համար:

ՆԱՏՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ (նստվածք)

- 4 Սեղմինատոր՝ պատրաստված AISI 304-ից՝ պլաստիկ թիթեղնորի հավաքածուով.
Առավել. մատակարարում $\text{մ}^3/\text{ժ}$ 9
Դրենաժային փական 2”
- 4 Դիֆրագմային օդաճնշական փականներ փորձնական էլեկտրափականներով:
- 2 Օդաճնշական դիֆրագմային պոմպ՝ տիղմը խտացուցիչին հասցնելու համար.
Կորպուսային պոմպ պոլիպրոպիլեն

ՏԻՂՄԻ ԽՏԱՑՈՒՑԻՉ

- 2 Պոլիէթիլենից կամ PRFV-ից պատրաստված կոնաձև հատակով գլանաձև բաք՝ մշակված պողպատե հիմքի շրջանակի հավաքածուով.
Հզորություն Լիտր 15.000
- 2 Մակարդակի անջատիչ մեկնարկային պոմպի համար:

ՎԵՐՋՆԱԿԱՆ pH ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

- 1 Թվային գործիք pH-ի չափման և կարգավորման համար
Լարում V 220/110
Չափման միջակայք 0 – 14 pH
Սահմանվող արժեքներ երկու
Պաշտպանություն IP 65

- 1 PVC էլեկտրոդի գոնդ
- 1 Համակցված pH էլեկտրոդ բարձր մեկուսացված մալուխով և միակցիչով:

ԿՐԱՔԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- 2 Պլաստիկից պատրաստված ռեակտորի բաք՝ խառնիչի կցորդով:
- 2 Էլեկտրական խառնիչ չժանգոտվող պողպատից լիսեռով և պտուտակով:
- 2 Կենտրոնախույս պոմպը պատրաստված է AISI 304-ից՝ կրի մշակման համար նախատեսված հատուկ խտացումներով:
- 2 Օդաճնշական դիֆրագմային փական, pH մետր, ռեակցիոն բաքում կրաքարի ավտոմատ չափաբաժնի համար:

ՊՈԼԻԷԼԵԿՏՐՈԼԻՏԻ ՆՈՍՐԱՑՄԱՆ ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆ

- 1 Երեք պահեստավորման բաք.
Պատրաստված AISI 304-ից
Պատրաստված էլեկտրոլիտային խառնուրդ 0,1%
- 1 Էլեկտրական խառնիչ:
- 1 Վենտուրի համակարգ՝ փոշու հեշտ նոսրացման համար:
- 1 Դոզավորման պոմպ.
Կարգավորելի մատակարարում/ժ 0 – 200
Լարում V 380

ԿՈԱԳՈՒԼԱՆՏԵՐԻ ԴՈԶԱՎՈՐՄԱՆ/ՊԱՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- 2 Պոլիէթիլենային բաք
Հզորություն Լիտր 2.000
- 2 Դոզավորման պոմպ.
Կարգավորելի մատակարարում/ժ 0 – 50
Լարում V 220

ՀԻՄՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՀԱՆԱԿ

- . 1 Հիմնական էլեկտրամեխանիկական կառավարման վահանակը պատրաստված է CEI ստանդարտներին համապատասխան, պաշտպանության մակարդակը IP 55:
- . 1 Կոմուտացիոն վահանակ՝ փորձնական էլեկտրամագնիսական փականներով՝ սեղմված օդի կառավարման համար:

ՊՐԵՍ ԶՏԻՉ

ՊՐԵՍ ԶՏԻՉ

- . 1 Շարժիչային պրես գտիչ, մոդել M 1000/80-60 բնութագրիչներ.

Փակ համակարգ	մոտորիզացված
Թիթեղների չափս	1000x1000 մմ
Տեղադրվող թիթեղներ	100
Տեղադրված թիթեղներ	60
Բրիկետների հաստություն	32 մմ
Զտված տարածք (60 թիթեղներով)	84.4 մ ²

Ընդհանուր ծավալը (60 թիթեղներով) 1379 լիտր

Զտման առավելագույն ճնշում 10 Բար

Փակ ճնշում 250 Բար

Դիֆրագմային սնուցման պոմպ

տիպ, մատակարարում 15 խորանարդ մետր/ժամ

ՊՐԵՍ ԶՏԻՉԻ ՇՐՋԱՆԱԿ

- . 1 Շրջանակը մշակված է պողպատից և նախագծված է այնպես, որ բաքը հավասարվի ջրամբարի հիդրավլիկ պրոֆիլին: Տանկերի հարմարավետ կառավարման համար շրջանակը համալրված է հարթակներով, անցուղիներով և պաշտպանիչ կառուցվածքով՝ համաձայն Եվրոպական միության ստանդարտների EN ISO 14122 (մաս 1-2-3-4):

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶՏՈՒՄ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶՏՈՒՄ ԶԵՌՔՈՎ

- 1 Պոլիէթիլենային բաք ջրի պահեստավորման համար, ջրահեռացման փականով.

Հզորություն	Լիտր	3.000
-------------	------	-------
- 1 Կենտրոնախույս պոմպ,

Մատակարարում	մ ³ /ժ	40.0
Պատրաստված է		
	AISI 304	
- 1 Պլաստիկից պատրաստված հոսքաչափ, աշխատանքային միջակայքը 8.000 – 40.000 լ/ժ.
- 1 Մակարդակի անջատիչ տանկի համար:
- 1 Զտիչ քվարց ավազի համար՝ հետևյալ բնութագրերով.

Պատրաստված է	Մշակված պողպատից	
Դիֆուզիոն համակարգ	Տախտակ դիֆուզորներով	
Տրամագիծ	մմ	2200

Աշխատանքային ճնշում Բար 2

Աշխատանքային առավել. ճնշում Բար 4

Հիմնական բացվածքներ սյան վերևում և կողային հատվածում:

- 5000 կգ քվարցային ավազ տարբեր չափերի

- 1 Ակտիվացված ածխածնի գտիչ՝ հետևյալ բնութագրերով.

Պատրաստված է	Մշակված պողպատից
Դիֆուզիոն համակարգ	Տախտակ դիֆուզորներով
Տրամագիծ	մմ 2200
Աշխատանքային ճնշում	Բար 2
Աշխատանքային առավել. ճնշում	Բար 4

Հիմնական բացվածքներ սյան վերևում և կողային հատվածում:
- 2.300 կգ հատիկավոր ակտիվացված ածխածին տարբեր չափերի
- 2 Ձեռքով բազմափական գտիչի համար

Պատրաստված է	Պոլիվինիլքլորիդ
Տրամագիծ	2”

Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Նախատեսել անվտանգությունը և կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

Հողային աշխատանքների իրականացում նախատեսված չէ:

- Կադրային ապահովում

Աշխատողների ընդհանուր թիվը՝ 80-245 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ -35-45 մարդ

Մինիմալ թիվը նշված է ստանդարտ գրաֆիկով աշխատելու դեպքում, մաքսիմալը՝ 24/7:

- Նյութերի և բնատեսությունների օգտագործում

Բնատեսություններից օգտագործվելու է միայն ջուր՝

անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ջ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 45

մարդ, N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 245 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025

խմ.օր/մարդ, T – աշխատանքային օրերի թիվն է՝ 300 օր

$$W_{\text{խ.տ.}} = (45 \times 0.016 + 245 \times 0.025) \times 300 = 2053,5 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000

քմ, K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը,

0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով,

$$900 U_1 = 1000 \times 0.0015 \times 900 = 1350 \text{ խմ/շին.}$$

ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3403,5 խմ/շին. ժամ:


Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման:

Շահագործման փուլերում հաշվի առնելով որ Աբովյան քաղաքը չունի ոռոգման ջրի ցանց, ուստի նախատեսվում է օգտագործել խմելու ջուրը՝ համաձայն կնքված տեխնիկական պայմանի:

Շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Ստորև ներկայացվում է գլխավոր հատակագիծը՝ իրադրային սխեման



Ջեռնարկության ընդհանուր արտանետումների բնութագիրն ու կազմը

Ընկերությունում մթնոլորտի աղտոտման աղբյուրներ են հանդիսանում՝ վառարանները, որանց աշխատանքի հետևանքով առաջացած արտանետումները, տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում:

Վառարանների աշխատանքի ընթացքում արտանետվում են՝ ազոտի օքսիդներ 0.2 գ/կգ, ածխածնի օքսիդ 0,9գ/կգ:

Վառարանները, որոնք աշխատում են բնական գազով, պահուստային վառելիք նախատեսված չէ: Գազի տարեկան ծախսը վառարաններում միասին կազմում է 24000մ³/տարի: Արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Ջեռուցման և տաք ջրամատակարարման համար վարչական շենքում տեղադրված է 1 ջրատաքացուցիչ կաթսա 5մ բարձրությամբ և 0.2մ տրամագծով: Գազի ծախսը 10000.0մ³/տարի է: Արտանետվում են ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վրկ	տ/տարի
Ածխածնի օքսիդ	1.51713	27,3
Ազոտի օքսիդներ	0.20505	3,8651

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ԳՕՍՏ 17.2.3.02-2014 -ի պահանջներին համապատասխան և բերված են աղյուսակներում: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվում է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության աերոզոլների համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, որսման դեպքում՝ 2 :

ՍԹԱ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

աղյուսակ 3

Արտադրութիւն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամը տարում		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	Անվանումը		Քանակը								
	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Հնեցման տեղամասի վառարան	Ածխածնի օքսիդ	1		8760		անկազմակերպ		1		1	
	Ազոտի օքսիդներ	1		8760		անկազմակերպ		1		2	
Մատրիցայի տաքացման վառարան	տաքացնող վառարան	2		3120		խողովակ		2		3	
Նախնական տաքացման վառարան	վառարան	1		3840		խողովակ		1		4	

աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվ		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		Ծավալը մ ³ /վրկ		ջերմաստիճանը	
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1		18		6		50		1413.7		25	
2		18		6		50		1413.7		25	
3		20		0.3		2*30		4.24		150	
4		5		0.2		10		0.3142		80	

ՆՎ – ներկա վիճակ Հ - հեռանկար

աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գազերը մաքրող սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուր. խմբի կենտրոնի, գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի				Ապահովվածութ յան գործակիցը %		Մաքրման առավելագույն չափը, %	
Նվ	Հ	X ₁	Y ₁	X ₂	Y ₂	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32
1		250	550								
2		250	500								
3		125	510								
4		120	650								

աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հանելու տարին
Նվ	Հ		Նվ			Հ (ՄԹԱ)			
Նվ	Հ		գ/լ	մգ/մ ³	տ/տարի	գ/լ	մգ/մ ³	տ/տարի	
11	12	33	34	35	36	37	38	39	40
1		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	0.057գ 0.2854	0.040 0.20	1.8 9.0	0.057գ 0.2854	0.040 0.20	1.8 9.0	2024
2		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./	0.057գ	0.040	1.8	0.057գ	0.040	1.8	2024

		Ածխածնի օքսիդ	0.2854	0.20	9.0	0.2854	0.20	9.0	
3		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	0.1895 1.137	45.1 270.7	2.1285 12.771	0.1895 1.137	45.1 270.7	2.1285 12.771	2024
4		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	0.00155 0.00933	4.965 29.6	0.0215 0.129	0.00155 0.00933	4.965 29.6	0.0215 0.129	2024

Մեքենայական հաշվարկի բնութագիրը

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները: Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Էրա» մեքենայական ծրագրով:

Օդեր7ութաբանական բնութագրերը, ցրման պայմանները որոշող գործակիցները

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվազ խտությունները /կոնցենտրացիաները/ վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան մգ/մ ³		ՍՊԳ 1000մ	բնակելի գոտի
	առանց ֆոնի			
Ածխածնի օքսիդ	0.0041691ՍԹԿ 0. 0208455 մգ/ մ ³	0.1641691 ՍԹԿ 0.8208457մգ/մ ³	0.1641691 ՍԹԿ 0.8208457մգ/մ ³	բնակելի գոտին հեռու է ավելի քան1կմ
Ազոտի օքսիդներ	0.027018ՍԹԿ 0.0054036մգ/ մ ³	0.0304518ՍԹԿ 0.0060904մգ/մ ³	0.0304518ՍԹԿ 0.0060904մգ/մ ³	

մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ :

Վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվների առաջարկները ներկայացված են ստորև աղյուսակում:

ՄԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

NN ը/կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտա- նետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, հենապես արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում՝ այդ պատճառով վերը նշված աղյուսակը չի լրացվել:

**Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ/
արտանետման թույլտվություններ/**

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը		Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վրկ	տ/տարի		գ / վրկ	տ/ տարի
Ածխածնի օքսիդ	1.51713	27,3			
Ազոտի օքսիդներ /երկ- օքսիդի հաշվարկով/	0.20505	3,8651			

**Կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ անբարենպաստ
կլիմայական պայմանների ժամանակ**

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Սահմանափակել վառելիքի մատկարարումը
4. Չդատարկել և չբեռնավերել հեշտ բռնկվող և այրվող հեղուկներ

5. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արվյան համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շահագործման աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ մոտ 1,32տ /յուրաքանչյուր ամիս մոտ 110կգ /110x12=1320կգ/, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

-Առաջանալու են նաև այլումինե պրոֆիլների կտրումից առաջացող այլումինի կտորներ և մանրակտորներ, որոնք նախատեսվում է վաճառել այլումինե արտադրությամբ զբաղվող ընկերություններին, քանակը կկազմի մոտ 25տ/տ:

11. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ
ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

-ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին, որի հյուսիս-արևելքում բարձրանում են Գեղամա լեռները (Աժդահակ լ. 3598մ) և Ողջաբերդի լեռնաբազուկը, հյուսիսում՝ Հատիս (2528.6մ) և Գութանասար (2299մ) լեռնազանգվածներով, իսկ հարավում՝ Նորքի սարավանդով: Տարածաշրջանի ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ

բարձրանում են հրաբխային խարամային կոները: Ողջ տարածքը ծածկված է Գեղամա լեռնաշղթայի հրաբուխներից արտավիժված բազալտ-անդեզիտաբազալտային լավաներով, որոնք անընդմեջ ձգվում են մինչև Արարատյան գոգավորության մատույցները: Թեք ու անտառագուրկ լանջերը կտրատված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8⁰-ից չեն գերազանցում և համեմատաբար մատչելի են տնտեսական յուրացման համար:

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Գլխավոր գետերն են Հրազդանը, Գետառը և Ագատը, որոնք պատկանում են Արաքսի ավազանին և հիմնականում ունեն ոռոգիչ և էներգետիկ նշանակություն: Հրազդան գետի վրա գործում են Աթարբեկյանի, Հրազդանի և Գյումուշի ՀԷԿ-երը: Կոտայքի մարզի էներգետիկ պահանջները ապահովված են վերը նշված ՀԷԿ-երի, ինչպես նաև Հրազդանի ՊՇԷԿ-ի ընդհանուր էլեկտրահամակարգով: Կան հանքային (Արզնի) և բարձրորակ քաղցրահամ ջրերի (Քառասունակն) աղբյուրներ:

Կլիման ըստ բարձրության փոխվում է տաք-չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10⁰C-ից մինչև 2.5⁰C (Աժդահակի •ա•աթին): Հունվարի միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում -4.5-5.0⁰C է, բարձրադիր վայրերում՝ -13.6⁰C, հուլիսինը՝ համապատասխանաբար +22.2⁰C և +8.7⁰C: Տարեկան տեղումների միջին քանակը 400-800 մմ է:

Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ.-ի, տեղագննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

- ԿԼԻՄԱՆ

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011

«Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Եղվարդ քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները, քանի որ Աբովյան քաղաքինը բացակայում է:

Շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո: Տաք սեզոնի եղանակները արդյունք են տեղանքի ռադիացիոն տաքացման և, հատկապես, ցամաքային արևադարձային օդային զանգվածների ազդեցության: Իսկ ձմռանը իշխում են բևեռային օդային զանգվածները, ինչպես նաև Սիբիրյան անտիցիկլոնի (բարձր ճնշման բարիկ դաշտ) արևմտյան լեզվակների ներխուժումները: Չի բացառվում նաև երկրի մակերեսից էֆեկտիվ ճառագայթարձակումը: Նշված գործոնները հանգեցնում են կլիմայի արտահայտված ցամաքայնությանը:

Տարեկան ջերմաստիճանային ամպլիտուդը մոտ 30° է: Թերմիկ ռեժիմը բավական բարձր է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 9.6° , ամենատաք ամսվանը 22.7° (օգոստոս), իսկ միջին հունվարյանը՝ -5.1° : Տեղումների տարեկան քանակը 436 մմ է: Շրջանն առանձնանում է արևի ճառագայթային էներգիայի առատությամբ: Արևի ճառագայթային էներգիայի այսպիսի առատությունը հանգեցնում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվության մաքսիմալ արժեքների: Անհրաժեշտ է շեշտել, որ այստեղ ուլտրամանուշակագույն ճառագայթների քաղցր բացառվում է: Քամու ռեժիմը տարբեր սեզոններում տարբեր արժեք ունի: Քամու միջին տարեկան արագությունը 2,6մ/վրկ է:

(ՀՀՇՆ II-7.01-2011):

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանիանվանումը	Բարձրություն՝ մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C													Միջինտարեկան. °C	Բացարձակնվազա-գույն. °C	Բացարձակառավել-լագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39	

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանիանվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների													Միջինտարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա %		ամենաշոգամսվա %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33	

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Սարեկայինբարձրությունը, սմ	Առավելագույնտասնօրյա-կայինբարձրու-թյունը, սմ	Տարվա մեջձնածածկույթվորերի քանակը	Ձյան մեջջրհառավե-լագույնքանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողմու- թյունների կրկնելիու- թյունը, %	Միջին ամսական արագու- թյունը, մ/վ	Միջին տարեկա ն արագու- թյունը, մ/վ	Ուժեղ քամի- ներով (≥15մ/վ)օրե րի քանակը	Հաշվա ր- կային արագու- թյունը, մ/վ, որը հնա- րավոր է մեկ անգամ «ո» տարի- ների ընթաց- քում		
			Միջին արագությունը, մ/վ												2	5	10
			Հյուսի- սային (Հս)	Հյուսիս- Արե- վելյան (ՀսԱրլ)	Արե- վելյա ն (Արլ)	Հարա վ- Արե- վելյան (ՀվԱրլ)	Հարա վ (Հվ)	Հարա վ- Արե- մտյան (ՀվԱրմ)	Արե- մտյա ն (Արմ)	Հյուսիս- Արե- մտյան (ՀսԱրմ)					0	0	0
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18

Եղվարդ	866,0	հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	2,6	29	2	2	34
			1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7							
		ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6					
			3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1							
		հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8					
			4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8							
հոկտեմբե ր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9							
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2									


- Օդային ավազան

Հանրապետության տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի կողմից:

Սակայն Աբովյանի մշտական (ստացիոնար) տարածքում դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնի պաշտոնական կայքում ներկայացված չէ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով մշակվել է «ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկը: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



- Ջրային ռեսուրսներ

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):


Քասախ գետը սկիզբ է առնում Արագած լեռնաշղթայից և գոտևորում է Եղվարդի սարահարթը տարածքը արևմուտքից: Քասախն ունի 89 կիլոմետր երկարություն, ավազանը՝ 1480 կմ²: Նրա մեջ թափվող վտակներից ամենաջրառատը Ամբերդն է: Մա սկիզբ է առնում Արագածի հորդառատ աղբյուրներից և ամռանը տեղ-տեղ պահպանվող ձյան հալոցքային ջրերից: Ամբերդի ռեժիմի կարգավորման համար առանձնապես կարևոր դեր է կատարում լեռնալանջերից քամիների բերած և խոր ձորերում կուտակված ձյունը, որը սովորաբար ստվերի տակ հալվում է դանդաղ ու դրանով իսկ գետահունը մշտապես ապահովում ջրերով: Ամբերդը հոսում է խոր կիրճով: Այն, Արագածում պարբերաբար թափվող տեղումների հետ կապված, մերթ ուժեղ վարարում է և մերթ էլ խիստ նվաղում:

Քասախի ջրերը ամբարվում են Ապարանի ջրամբարում և օգտագործվում ոռոգման նպատակով: Մնումը ձնանձրևային է (76 %), հորդանամ է ապրիլ-հունիս ամիսներին:


Տարածքում գրունտային և ստորերկրյա ջրային հոսքեր ըստ ֆոնդային տվյալների չեն արձանագրվել: Դա պայմանավորված է այն փաստով, որ տեղանքի հատակը ծածկված է ալյուվիալ ավազախճային խառնուրդով և ավազակավով: Ալյուվիալ բերվածքները հիմնատակվում են հրաբխային ձևավորումներով (տուֆ, խարամ և շլակը), որոնք էլ օժտված են բարձր ջրաթափանցելիությամբ:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հեռու չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:



Գծապատկեր 1. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.




Գծապատկեր 2. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին




Փճապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Փճապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Նիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
--------------------------------	----------------	---	----------------------	---	---


Հրազդան	Քասախ	0.5 կմ ք. Ապարանից վերև (43)	Երկաթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Ապարանից ներքև (44)	Նիտրիտ իոն, մանգան, երկաթ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՉՆ	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	
		1 կմ ք. Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
		3.5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
	Գետաբերան (47)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, ՇԱԱ	3-րդ	3-րդ	
	Գեղարոտ	0.5 կմ գ. Արագածից վերև (48)	Ցինկ, երկաթ, ալյումին	3-րդ	5-րդ
			Կոբալտ	4-րդ	
			Մանգան	5-րդ	
Գետաբերան (49)		Ամոնիում իոն, երկաթ	3-րդ	3-րդ	

Հրազդան ջրավազանային կառավարման տարածք


Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև, ինչպես նաև գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ նաև ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով և ընհանուր անօրգանական ազոտով։ Ապարան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով։

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով։




Գծապատկեր 10. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 11. Քասախ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



- Հողերի նկարագիրը

Նախալեռնային գոտու շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը տարածվում են մինչև 1800մ բարձրությունները: Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Բաց-շագանակագույն հողերի կլանող համալիրը հագեցած է հողալկալի հիմքերով, իսկ կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Բաց-շագանակագույն հողերի կլանող համալիրը հագեցած է հողալկալի հիմքերով, իսկ կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

- Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում որևէ շինարարական աշխատանքներ չեն իրականացվելու, այլ արդեն գոյություն ունեցող շենք շինություններում տեղադրվելու են համապատասխան սարքավորումները:

- Կենսաբազմազանություն

Տարածքը ներկայացված է հիմնականում տափաստանային բուսականությամբ: Հացազգի և հացազգի-բազմաբուսականությամբ տափաստանները հիմնականում փեստուկային լեռնային տափաստաններ են (*Festuca valesiaca* ձևավորումներ) բարակոտիկ կատարավորի (*Koeleria cristata*), կրակ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), ճիլ տափաստանայինի (*Phleum phleoides*) մասնակցությամբ: Առանձին հատվածներում նկատվում են ոչ մեծ հարոսներ, որոնցում ամբողջությամբ գերիշխում է երիգախոտը/երիգաքիստ երկարամազը: Նարդենների խմբավորումները աչքի են ընկնում իրենց բնորոշ դեղնականաչավուն գույնով. ամառվա սկզբին դրանց ցողունը սկսում է դեղնել, իսկ հուլիսին այդ բույսերի վերգետնյա հատվածը չորանում է:

Տարածքը ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից, քանի որ արդեն շենք շինությունները գոյություն ունեցող են և տարածքը կառուցապատված է:

Նախնական գնահատման հայտը կազմելիս մեր ընկերությունը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2014 թվականի թիվ 781-Ն որոշմամբ, համաձայն որի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելու դեպքում հիմնադրությային փաստաթղթի, նախատեսվող գործունեության հայտի պահանջներով:

Նախնական գնահատման հայտի կազմման ժամանակ ուսումնասիրվել է ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված տեղեկատվությունը բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր (հիմք՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքը. <http://www.env.am>): Արժանի համայնքի հարակից շրջանում արձանագրված են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխ Օլթիի- *Allium oltense*: Այն համարվում է վտանգված տեսակ, բուսատեսակին սպառնացող վտանգը կապված է տափաստանների հերկման և գերարածեցման հետ: Աճելավայրերից մեկը Երևանի ֆլորիստիկ շրջանում՝ Նոր Գեղի և Եղվարդ բնակավայրերի միջև: Բույսը աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ.մ. 1500-2300մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնայն տափաստաններում: Բուսատեսակի պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Եղվարդ բնակավայրի շրջանում հայտնի են.

- Քալաշյանի երկարաբեղիկը- *Conizonia kalashiani* –ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, որը տարածված է Արայի լեռան հարավային լանջերին՝ Եղվարդից դեպի հյուսիս-արևելք: Տեսակի պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

- Հայկական սևամարմինը- *Armenohelops armeniacus*-սահմանափակ արեալով տեսակ, Հայաստանի էնդեմիկ:Տարածված է Եղվարդ ավանի շրջանի լեռնատափաստաններում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

Տարածքն ամբողջովին ասֆալտապատ է, ուստի բացառվում են բուսական և կենդանական տեսակների առկայությունը:

12. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Աշխատանքները կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժության խմբերի մատչելիության վերաբերյալ միջոցառումներ առաջնորդվելով ՀՀՇՆ 4-11.07.01-2006 շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի պահանջներով:

- ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շահագործման աշխատանքների,
- տեխնիկայի շահագործման,
- օգտագործվող նյութերի օգտագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

- ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- արտանետումներ անողացման ընթացքում

- վառարանի արտանետումներ հնեցման ժամանակ:

- Կենսաբազմազանություն

Ինչպես արդեն նշվել է նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, իսկ գործունեությունն իրականացվում է մարդկային ակտիվ ազդեցություն ունեցող գոտում, ուստի անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կենսաբազմազանության վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

- Զգայուն կլանիչներ

Զգայուն կլանիչների՝ մասնավորապես բնակավայրերի, վրա նախատեսվող գործունեությունը հնարավոր ազդեցություն չունի, քանի որ մոտակա Աբովյան քաղաքը գտնվում են համապատասխանաբար մինչև 1,0կմ հեռավորության վրա:

Բոլոր հումքատեսակների տեղափոխումն իրականացվում է փակ ծածքով ավտոտրանսպորտային միջոցներով, իսկ դրանց և արտադրական մնացորդների ընդունումը և պահեստավորումն իրականացվում են փակ շինությունների մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով փոշու հետևանքով տարածքի հնարավոր աղտոտումը:

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է պահպանել Առողջապահության Նախարարի 2010թ-ի «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 27 հրամանի պահանջները:

- Աղմուկի և վիբրացիա

Արտադրական գործունեության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում: Նախագծային փուլում իրականացվել են շրջակա միջավայրի վրա և աշխատատեղերում աղմուկի և թրթռման մակարդակների գործիքային չափումներ, ըստ սովյալների և վերլուծության արդյունքների աղմուկի և թրթռման մակարդակները համապատասխանում են ՀՀ Առողջապահության նախարարության հրամանով 2002թ սահմանված թիվ 138 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերին սահմանային չափերին:

13. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- պարբերաբար ստուգել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

- ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Մաքրման կայանի տեղադրում, անողացման գործընթացում առաջացող էլեկտրոլիտների ջրերի մաքրման նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը կարելի է եզրակացվել, որ գործունեության արդյունքում տեղանքի ջրային ռեսուրսները զերծ են հնարավոր աղտոտումից:

- ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի կարող լինել, քանի որ նախատեսվող

գործունեության ընթացքում որևէ հողային աշխատանքներ նախատեսված չեն:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով հողածածք տարածքները հնարավոր աղտոտումից:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Շնկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Տարածքից հեռացվում կամ տրվում են վնասազերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստն, որ նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ նոր տարածքներ չեն օտարվելու, արտադրական տարածքը մնում է անփոփոխ, ուստի հողային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

- ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շահագործման աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են արտադրամաս օգտագործումից առաջ և պահվելու են տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող գործունեության առկա վտանգավոր օբյեկտները
«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
- անձրևաջրերը հեռանում են բակային տարածքներից դեպի փողոց՝ հարակից սելավատար:

- Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ դադարեցվում է գործարանի շահագործումը, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ծառայության՝ Աբովյանի ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

Ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Հրդեհային անվտանգություն

Արտադրությունում գտնվող բոլոր էլեկտրական ենթակայանները պետք է համալրված լինեն հրդեհային ավտոմոտ սարքերով, որոնք վերահսկվում են տարածքներում հրդեհի յուրաքանչյուր բռնկում և դրանց բացահայտման դեպքում ավտոմատ միացնում են հրդեհների մեկուսացման համակարգը:

Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները

Ընկերության արտադրական գործունեությունը այլումինե պրոֆիլների և դետալների աշխատանքների ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար շահագործող ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է ստորև ներկայացված միջոցառումները.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի

կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա՝ Արգավանդի օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման դեպքում պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Բազաներում ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների մասին որոշում կայացնելու դեպքում նախատեսված իրականացնել միջոցառումներ՝

- I կատեգորիա՝ խստացվում է տեխնոլոգիական գործընթացների վերահսկողությունը,
- II կատեգորիա՝ վառարանների դադարեցվում է թափոնների տեղափոխումը վառարանային տեղամաս,
- III կատեգորիա՝ է դադարեցվում վառարանների բեռնումը և վառարանները անջատվում են:

Հրդեհային անվտանգություն

Ա. Արտադրությունում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինի հակահրդեհային ավտոմատ սարքով, որը վերահսկում է դրա տարածքում հրդեհի

յուրաքանչյուր բռնկում:

Բ. Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:

գ. Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:

Դ. Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ բազաների գործունեությունը դադարեցվում է, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Սոցիալական ներդրումներ

Ընկերությունը գործադիր մարմնի և հիմնադիրների համաձայնեցմամբ պլանավորում է 2025թ-ից իրականացնել սոցիալական ներդրումային ծրագրեր: Սոցիալական ծրագրերի ընտրության հարցում անմիջական համագործակցելու է Անոլանի համայնքապետարանի և բնակիչների հետ: Ներդրումային ծրագրերը պետք է լինեն հրապարակային, լուսաբանվեն և ուղղված լինեն համայնքային խնդիրների լուծմանը: Ծրագրերի ընդունման, հաստատման և իրականացման ընթացքը կիրականացվի Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվության լավագույն փորձի օրինակներով:

Ծրագրերի իրականացման բնագավառները լինելու են

- Բնապահպանական
- Հանրային բարեկեցության
- Կրթական

Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ

Նախատեսվող գործունեության համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Ընդհանուր առմամբ սպասարկող անձնակազմի թվաքանակը նախատեսվում է 245 մարդ: Անձնակազմի հավաքագրման ընթացքում առաջնապատվություն կտրվի տեղական բնակչությանը:

Սպասարկվող անձնակազմը կապահովվի անհրաժեշտ արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով: ՀՀ գործող օրենսդրության պահանջներին

համապատասխան նրանց համար կապահովվեն նախատեսված սննդի ընդունման հնարավորություններ, սաննհանգույցներ, լոգարաններ, հանգստի պայմաններ և այլն:

- ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների շարժիչները,
- տեխնիկական միջոցների և սարքավորումների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

14.Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողածածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i} \Phi_{i}, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

\sum_{q} -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական հրապարակների համար ընդունվում է 4:

Φ_{q} -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մույն կարգի համաձայն

$$\Phi_{q} = 1000 \text{ դրամ:}$$

Ψ_{i} -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Φ_{i} -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_{i} գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_{i} = q (3 S_{U_i} - 2 U_{\theta} U_i), S_{U_i} > U_{\theta} U_i (2)$$

որտեղ՝

ՄԹԱ_i -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման հաշվարկով ցույց է տրվել, որ ՄԹԿ գերազանցումներ չկան՝ $\Phi_i = S_{ui}$

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակները և միանգամյա առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքները բերված են տեքստի աղյուսակ 6-ում: Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է 157,65 տոննա: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի պարամետրերը և քանակները ՄԹԱ-ի հաշվարկների համար բերված են աղյուսակ 3-ում: Մոտակա 5 տարիների ընթացքում ձեռնարկության արտադրողականության փոփոխություն չի նախատեսվում:

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, հեևապես արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում՝ այդ պատճառով աղյուսակ 5-ը չի լրացվել:

Վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների հետևանքով շրջակա միջավայրի հասցված տնտեսական վնասը գնահատվում է 7,1387 հազ. դրամ/տարի: Ստորև ներկայացված աղյուսակում բերված է տնտեսությանը հասցված վնասի հաշվարկը [2]:

նյութերի անվանումը	q	Տ րամ	i	Տ րամ
Ռկաթի օքսիդ	121	000	3.9	339600 727600
Պոտի օքսիդներ	5.75	000	2.5	37500
Ռկօքսիդի հաշվարկով				
Ծխածնի օքսիդ	30.9	000		23600

տղամենը		38700
---------	--	-------

Տրամադրված արտանետման չափաքանակները մնում են ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածություն չի առաջացել: Ֆոնային գերնորմատիվային աղտոտվածության առաջացման հետ կապված արտանետման չափաքանակները վերանայվում են տրամադրման պահից 5 տարվանից ոչ շուտ:

15. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Արժվյան քաղաքի հայցվող և դրա հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ունենալ տեղեկատվական հենք՝ հսկելու ընկերության գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների համար: Շրջակա միջավայրի ամբողջական մոնիթորինգ իրականացնելու համար նախատեսվում է յուրաքանչյուր եռամսյակ իրականացնել կանոնավոր չափումներ, այդ թվում մթնոլորտային օդ արտանետումների, աղմուկի ֆոնային չափումներ: Արդյունքները կգրանցվեն գրանցամատյանում և հասանելի կլինեն բոլոր շահագրգիռ կողմերին:

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է թափոնների վնասակար հատկություններով, ինչպես նաև արտանետվող նյութերի բաղադրությամբ: Հիմնական նյութերն են ազոտի երկօքսիդները, ածխածնի մոնօքսիդը, երկաթի օքսիդը: Օդում ածխածնի մոնօքսիդի, ազոտի երկօքսիդի և երկաթի օքսիդի պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ): Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը համալիրի շահագործման ընթացքում կիրակաացնի չափումներ՝ ածխածնի մոնօքսիդի, ազոտի

երկօքսիդների և եկաթի օքսիդի պարունակությունները որոշելու համար: Յուրաքանչյուր չափում պետք է իրականացվի բոլոր նշված միացությունների երկուական նմուշառումների միջոցով: Նմուշառման կետերը պետք է լինեն համալիրի խողովակի մերձակայքում՝ 2 – 5 մ շառավղով և ամենա մոտ զգայուն կլանիչի մոտ: Մոնիթորինգի արդյունքները ճշգրիտ լինելու նպատակով, նմուշառման կետերի հեռավորությունը ընտրվում է հնարավորինս մոտ արտանետման աղբյուրին և մոտակա զգայուն կլանիչին:

Շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
3. Նախատեսվում է համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ ՈՀիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:
4. Անողացման գործընթացի արդյունքում կատարվում է էլեկտրոլիտների մոնիթորինգ /բաղադրության ստուգում/:
5. Վառարանի տարածքում կատարվում է ջերմային պրոցեսների մոնիթորինգ /ջերմային տվիչների տվյալները/:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ գործընթացի ընթացքում հատկացնել 375000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ դրամ		
Մթնոլորտային օդ կատարվող ադտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	250000	250000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	125000	125000
Ընդամենը		375000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շահագործման և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շահագործման համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Տարածքում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շահագործման աշխատանքներ	Օդի որակ	(a) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն կենցաղային աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով
	Աղմուկ	<p>(a) աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերիմիջակայքում</p> <p>(b) աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	Թափոնների կառավարում	<p>(a) Շահագործման արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն կենցաղային թափոններից և ըստ առաջացման տեղափոխվեն հատկացված աղբավայր:</p> <p>(b) Կենցաղային աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) շահագործման փուլերում հաշվի առնելով որ Աբովյան քաղաքը չունի ոռոգման ջրի ցանց, ուստի նախատեսվում է օգտագործել խմելու ջուրը՝ համաձայն կնքված տեխնիկական պայմանի: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրված զուգարաններից, խմելու ջուրը կմատակարարվի Համաձայն Վեոլիա Ջուր պայմանագրի:</p> <p>Անձրևաջրերը հեռանում են բակային տարածքներից դեպի փողոց՝ հարակից սելավատար:</p>

<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պատենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
--	---	--

<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի արտադրամասում; - բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրների մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Սարքավորումների գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Արտադրամաս - Արտադրանքի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Արտադրամաս տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

<p>Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում</p>	<p>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</p>	<p>- Արտադրամաս</p>	<p>Գործընթացների գործունեության ստուգում</p>	<p>Մեխանիզմների շահագործման ընթացքում</p>	<p>Կապալառու</p>
<p>Հողային աշխատանքներ</p>	<p>Նախատեսված չեն</p>	<p>-</p>	<p>Գործընթացների ստուգում</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Հումքերի գնում</p>	<p>- Հումքի գնում վստահելի մատակարարներից</p>	<p>Հումքերի պահեստ</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում</p>	<p>Մատակարարման ընթացքում</p>	<p>Կապալառու, մատակարար</p>
<p>Կենցաղային աղբի առաջացում</p>	<p>- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման</p>	<p>Արտադրամասում</p>	<p>Արտաքին գնում</p>	<p>Շինարարության ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու, քաղաքապետարանի վերահսկող</p>

	վերաբերյալ				ւթյուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Արտադրամասում	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու
Կենսաբազմազանություն	ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների	Հարակից տարածք	Մասնագիտական այց	Տարեկան անգամ մեկ	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
4. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
5. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕП/ЕЕА
6. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности. Стройиздат. Москва. 1982г.
7. СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий
8. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
9. «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999թ. մարտի 30-ի N 192 և 2008թ. օգոստոսի 21-ի N953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1673-Ն որոշում:
10. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը՝ հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N91-Ն որոշմամբ:
11. Методика расчёта выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов. Казахстан 2008г.
12. Нормативные показатели удельных выбросов вредных веществ в атмосферу, г. Харьков 1991г.